Աջակցություն որակի ենթակառուցվածքների զարգացմանը Հայաստանում

ԵՄ ֆինանսավորմամբ և ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագիր

Տեղեկագիր
Դեկտեմբեր 2023

Համապատասխանության գնահատման և հավատարմագրման ոլորտի կարիքները

2023թ. դեկտեմբերի 1, - Որակի ենթակառուցվածքը կարևոր գործիք է քաղաքացիների բարեկեցության ապահովման համար: Դրա բաղկացուցիչ մաս են կազմում ստանդարտացումը, չափագիտությունը, շուկայի վերահսկողությունը, համապատասխանության գնահատումը և հավատարմագրումը: Հայտնի է, որ որակի ենթակառուցվածքը փոփոխվող համակարգ է, որի արդյունավետությունը ամբողջովին բխում է երկրի կարիքներից:
ԵՄ/ՄԱԱԶԿ «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրով ՄԱԱԶԿ-ի փորձագետը ուսումնասիրեց չափագիտության կարիքները: Հարցազրույցներ անցկացվեցին պետական և մասնավոր ոլորտի ավելի քան 100 ներկայացուցչի հետ: Զուգահեռաբար, իրականացվեց համապատասխանության գնահատման և հավատարմագրման ուսումնասիրություն, որը ներկայումս գտնվում է ավարտական փուլում:

Նախնական եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացվեցին դեկտեմբերի 1-ին ՍՉԱՄ-ում կազմակերպված աշխատաժողովի ժամանակ, որին մասնակցեցին պետական և մասնավոր հատվածի 25 ներկայացուցիչ: Քննարկման հիմնական նպատակն էր սահմանել համապատասխանության գնահատման և հավատարմագրման ոլորտում ազգային առաջնահերթությունները:

Աշխատաժողովի մասնակիցները հարցուպատասխան ձևաչափով քննարկեցին հետագա քայլերը, որոնց թվում են՝ կարիքների գնահատման հաշվետվության վերջնական մշակումը, ռազմավարության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը և 10-ամյա զարգացման համապարփակ պլանի ձևավորումը: Բանախոսները համակարծիք էին, որ որակի ազգային ենթակառուցվածքը ոչ միայն բարձրացնում է արտադրանքի մրցունակությունը, այլև ապահովում է որակի, անվտանգության պահանջները, ինչն իր հերթին խրախուսում է միջազգային առևտուրը:

Հայաստանի չափագիտության համակարգի բարելավումը ՄԱԱԶԿ-ի կենտրոնում

2023 թ. - Դեկտեմբերի 4-ից 7-ը ՄԱԱԶԿ-ի միջազգային փորձագետը գտնվում էր Հայաստանում: Այցի նպատակն էր գնահատել Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կարողությունները կայուն և միջազգայնորեն ճանաչված չափագիտական ծառայություններ մատուցելու համար:
Միջազգային փորձագետը հարցազրույցներ ունեցավ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ՍՉԱՄ-ի, Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Ազգային հավատարմագրման մարմնի, ՀՀ առևտրի պալատի ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների նպատակն էր բացահայտել ՍՉԱՄ չափագիտության խորհրդի վերաբերյալ նրանց պատկերացումներն ու կարիքները: Նախնական եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացվեցին դեկտեմբերի 7-ին ՍՉԱՄ-ում կազմակերպված աշխատաժողովի ժամանակ, որին մասնակցեցին պետական և մասնավոր հատվածի 14 ներկայացուցիչ: Քննարկման հիմնական նպատակն էր անդրադառնալ Չափագիտության խորհրդում առանցքային դերակատարների ներգրավման հիմնական չափանիշներին, ՍՉԱՄ-ի կազմակերպչական կառուցվածքին և Չափագիտության ազգային համակարգի զարգացման ուղղությունների սահմանմանը: ՄԱԱԶԿ-ի ծրագրի նպաստում է Հայաստանում չափագիտության գործուն համակարգի հետագա զարգացմանը, ներառյալ չափումների միասնականության ապահովման, ապրանքների որակի և անվտանգության նկատմամբ պատշաճ վերահսկողության, միջազգային ստանդարտներին համապատասխան առևտրի կազմակերպմանը: Այս ծրագիրը համահունչ է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառությանը՝ ուղղված առևտրի մրցունակության բարձրացմանն ու արդյունքների շահավետ օգտագործմանը:

Լրացուցիչ տեղեկության համար դիմել
Ծրագրի ղեկավար Ցոնգ Վու C.WU@unido.org

Funded by the European Union